ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.03.2022թ.

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՈՐՈՇՈՒՄ
ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/23

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լևոն Օհանյանս, ուսումնասիրելով թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/23 բողոքի քննության շրջանակներում Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված թիվ «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգը կասեցումից հանելու վերաբերյալ միջնորդությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասով, ինչպես նաև ելնելով հանրային շահերից,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Ներկայացված միջնորդությունը բավարարել մասնակիորեն:

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի ենթակայության մանկապարտեզների կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգը հանել կասեցումից, բացառությամբ 9-րդ, 10-րդ և 45-րդ չափաբաժինների, որոնք կասեցումից հանել ժամանակավորապես՝ մինչև պայմանագիր կնքելու մասին որոշում կայացնելը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**